Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2024 թվականի մայիսի 22-ի N 10 - 2 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար
Ա. Վ. Գրիգորյան
22 մայիսի 2024 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ) կանոնադրությունը:

2. ՀՊՏՀ առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը տեղի է ունենում ըստ հավելվածի մասնագիտությունների:

3. ՀՊՏՀ առկա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձինք:

4. Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

5. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունը (փաստաթղթերի ընդունում և քննությունների կազմակերպում) իրականացնում է 2024-2025 ուսումնական տարվա միջին մասնագիտական, նախնական (արհեստագործական), բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ընդունելության կազմակերպման նպատակով ձևավորված ընդունող հանձնաժողովը՝ ռեկտորի նախագահությամբ:

6. Մասնագիտական շեմային քննությունների անցկացման համար ռեկտորի հրամանով, ըստ շնորհվող որակավորումների, ձևավորվում են քննական հանձնաժողովներ՝ համապատասխան որակավորման մագիստրոսական ծրագրեր իրականացնող ամբիոնների վարիչների անդամակցությամբ:

7. Օտարերկրյա բուհերի շրջանավարտների ընդունելությունը կատարվում է մասնագիտական քննական հանձնաժողովի անցկացրած հարցազրույցի արդյունքների, ուսումնական և միջազգային կապերի բաժինների կարծիքների հիման վրա՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ:

8. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է հետևյալ կերպ.

1) պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի ընդունելությունն իրականացվում է ըստ դիպլոմի հավելվածում գրանցված ուսումնառության բոլոր կիսամյակների հանրագումարային միջին որակական գնահատականի (այսուհետ ՄՈԳ)՝ հետևյալ առաջնահերթությամբ՝

ա. ՀՊՏՀ (այդ թվում՝ մասնաճյուղերի) առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի 2023-2024 ուսումնական տարվա համապատասխան որակավորում ունեցող շրջանավարտներ,

բ. ՀՊՏՀ (այդ թվում՝ մասնաճյուղերի) առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի 2023-2024 ուսումնական տարվա այլ որակավորում ունեցող շրջանավարտներ,

գ. ՀՊՏՀ (այդ թվում՝ մասնաճյուղերի) առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի նախորդ ուսումնական տարիների շրջանավարտներ՝ անկախ որակավորումից,

դ. այլ բուհերի առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի համապատասխան որակավորում ունեցող շրջանավարտներ:

ե. սույն կանոնակարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի բ., գ., դ. պարբերություններին բավարարող դիմորդները պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի մրցույթին մասնակցելու համար պետք է հանձնեն շեմային քննություն՝ ըստ սույն կարգին կից հավելվածի:

զ. մրցույթն իրականացվում է ըստ դիմորդների ՄՈԳ-երի՝ հարյուրերորդականի ճշտությամբ:

է. դիմորդների հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

- գերազանցության դիպլոմի առկայությունը,
- ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացած միավորը,
- մասնագիտական և մասնագիտացման առարկաներից ստացած միավորների գումարը.

2) առկա ուսուցման մագիստրատուրայի բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) տեղերին կարող են դիմել ՀՊՏՀ և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ և նախորդ տարիների բակալավրի,

դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտները.

ա. սահմանված տեղերի շրջանակներում, առանց շեմային քննության, ընդունելության մրցույթին կարող են մասնակցել համապատասխան որակավորման աստիճան ունեցող ՀՊՏՀ շրջանավարտները: ՀՊՏՀ համապատասխան որակավորման աստիճան չունեցող դիմորդները ընդունելության մրցույթին մասնակցելու համար պետք է հանձնեն կրթական ծրագրերին համապատասխան շեմային քննություն,

բ. այլ բուհերի դիմորդները ընդունելության մրցույթին մասնակցելու համար կրթական ծրագրերին համապատասխան պետք է հանձնեն շեմային քննություն՝ անկախ որակավորումից,

գ. դիմորդն իր հայտագրած կրթական ծրագրի (ծրագրերի) համար շեմային քննություն է հանձնում՝ ըստ սույն կարգին կից հավելվածի:

9. Ըստ ՄՈԳ-երի՝ վճարովի տեղերի ընդունելության մրցույթին սահմանված տեղերի շրջանակներում մասնակցում են համապատասխան որակավորման աստիճան ունեցող ՀՊՏՀ շրջանավարտները, ինչպես նաև շեմային քննությունից դրական գնահատական ստացած ՀՊՏՀ համապատասխան որակավորման աստիճան չունեցող շրջանավարտները և այլ բուհերի շրջանավարտները:

1) Վճարովի տեղերի մրցույթն իրականացվում է ըստ դիմորդների ՄՈԳ-երի՝ հարյուրերորդականի ճշտությամբ:

2) Դիմորդների հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

- գերազանցության դիպլոմի առկայությունը,
- ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացած միավորը,
- մասնագիտական և մասնագիտացման առարկաներից ստացած միավորների գումարը:

10. Դիմում-հայտում դիմորդը կարող է հայտագրել 2 մագիստրոսական կրթական ծրագիր՝ ըստ հայտում նշված առաջին կրթական ծրագրի գերակայության:

1) Հայտում նշված առաջին կրթական ծրագրի չբացվելու կամ մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին:

11. Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր ունեցող կրթական ծրագրերը բացվում են, եթե այդ ծրագրով դիմել և մրցույթը հաղթահարել է առնվազն մեկ ուսանող:

12. Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր չունեցող կրթական ծրագրերը բացվում են, եթե այդ ծրագրով դիմել, մրցույթը հաղթահարել և հրամանագրվել է առնվազն 5 ուսանող:

13. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է առցանց), որը հաստատվում է ընդունող հանձնաժողով կողմից կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո.

2) բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի բնագրերն ու պատճենները կամ ակադեմիական տեղեկանքը (տվյալ տարվա այն շրջանավարտների դեպքում, որոնք դեռ չեն ստացել ավարտական փաստաթուղթը).

3) անձնագրի լուսապատճենը.

4) 3 x 4 սմ չափի թվային լուսանկար.

5) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի լուսապատճենը.

6) դիմորդի առանձնահատուկ կարգավիճակը (արտոնությունը) հավաստող փաստաթղթի լուսապատճենը:

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի

երեխա լինելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին):

15. Փաստաթղթերի բնօրինակները և պատճենները մեկօրյա ժամկետում դիմորդը ներկայացնում է ընդունող հանձնաժողով: Դիմորդների փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ ք. Երևան, Մ. Նալբանդյան 128 հասցեով, իսկ Գյումրու մասնաճյուղում՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32 հասցեով:

16. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի հունիսի 3-ից մինչև 2024 թվականի հունիսի 20-ը ներառյալ:

17. Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) տեղերի համար դիմորդների փաստաթղթերն ընդունվում են առցանց՝ 2 փուլով.

1) առաջին փուլ՝ 2024 թվականի հունիսի 3-ից մինչև 2024 թվականի հունիսի 20-ը ներառյալ.

2) երկրորդ փուլ՝ 2024 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 30-ը ներառյալ.

ա. առաջին փուլի դիմորդները շեմային քննությունը հանձնում են 2024 թվականի հունիսի 24-ին, ժամը 12:00-ին, երկրորդ փուլի դիմորդները՝ 2024 թվականի 2024 թվականի սեպտեմբերի 2-ին, ժամը 12:00-ին,

բ. դիմորդները շեմային քննությունը հանձնում են բանավոր,

գ. ընդունելության առաջին փուլի մրցույթի արդյունքները հրապարակվում են մինչև 2024 թվականի հունիսի 26-ը, իսկ երկրորդ փուլի արդյունքները՝ մինչև 2024 թվականի սեպտեմբերի 5-ը:

18. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի անվճար տեղերում ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է մինչև հուլիսի 1-ը ներառյալ:

19. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի վճարովի տեղերում ընդունված դիմորդների վերջնական հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալուց հետո՝ առաջին կիսամյակի նվազագույնը առաջին ամսվա ուսման վարձը վճարելու և վճարման կտրոնը ընդունող հանձնաժողով ներկայացնելու դեպքում, եթե առաջին փուլի դիմորդը վճարումը կատարել է մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը ներառյալ, իսկ երկրորդ փուլի դիմորդը՝ մինչև 2024 թվականի սեպտեմբերի 16-ը ներառյալ:

20. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի վճարովի տեղերում ընդունելության մրցույթը հաղթահարած, սակայն կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալուց հետո սահմանված վճարը մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը ներառյալ չկատարած դիմորդները չեն հրամանագրվում և կարող են մասնակցել մագիստրատուրայի ընդունելության երկրորդ փուլին՝ թափուր տեղերի հաշվին:

21. «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մագիստրոսական կրթական ծրագիրն իրականացվում է Գերմանիայի Ցվիկաոյի համալսարանի հետ համատեղ, որի ընդունելության պայմանները և ժամկետները սահմանված են համագործակցության պայմանագրով:

Հավելված

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2024-2025 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության մասնագիտությունները

Դասիչը, մասնագիտությունը	Դասիչը, կրթական ծրագիրը	Անվճար տեղերի քանակը	Վճարովի տեղերի քանակը	Ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)	Ուսման տևողությունը	Շեմային քննությունը
1	2	3	4	5	6	7
031101.00.7, Տնտեսագիտություն		**19**	**91**			
031101.00.7, Տնտեսագիտություն	031102.02.7, Տնտեսագիտության տեսություն	5	10	700000	1,5 տարի (երեկոյան)	Տնտեսագիտության տեսություն
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.04.7, Միջազգային տնտեսական հարաբերություններ	5	15	700000	1,5 տարի (երեկոյան)	Միջազգային տնտեսական հարաբերություններ
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.06.7, Բնօգտագործման տնտեսագիտություն	2	8	520000	2 տարի (ցերեկային)	Բնօգտագործման տնտեսագիտություն
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.15.7, Տնտեսության պետական կարգավորում	2	18	700000	1,5 տարի (երեկոյան)	Մակրոտնտեսական կարգավորում
031101.00.7, Տնտեսագիտություն	031101.16.7, Մակրոտնտեսական վերլուծություն	3	17	700000	1,5 տարի (երեկոյան)	Մակրոտնտեսական կարգավորում

031101.00.7, Տնտեսագիտություն	031101.21.7, Նորարարությունների տնտեսագիտություն	2	23	700000	1,5 տարի (երեկոյան)	Նորարարությունների տնտեսագիտություն
041101.00.7, Հաշվապահական հաշվառում և հարկում		**15**	**35**			
041101.00.7, Հաշվապահական հաշվառում և հարկում	041101.01.7, Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	7	18	700000	1,5 տարի (երեկոյան)	Հաշվապահական հաշվառում
041101.00.7, Հաշվապահական հաշվառում և հարկում	041101.03.7, Աուդիտ	8	17	700000	1,5 տարի (երեկոյան)	Աուդիտ
041201.00.7, Ֆինանսներ		**20**	**135**			
041201.00.7, Ֆինանսներ	041201.02.7, Ապահովագրական գործ	0	20	700000	1,5 տարի (երեկոյան)	Ֆինանսներ
041201.00.7, Ֆինանսներ	041201.03.7, Հանրային ֆինանսներ	4	11	700000	1,5 տարի (երեկոյան)	Ֆինանսներ
041201.00.7, Ֆինանսներ	041201.04.7, Կորպորատիվ ֆինանսներ	4	11	700000	1,5 տարի (երեկոյան)	Ֆինանսներ
041201.00.7, Ֆինանսներ	041201.05.7, Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	4	11	700000	1,5 տարի (երեկոյան)	Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում
041201.00.7, Ֆինանսներ	041201.06.7, Բանկային գործունեության կազմակերպում	6	54	700000	1,5 տարի (երեկոյան)	Բանկային գործ

041201.00.7, Ֆինանսներ	041201.08.7, Մաքսային վարչարարություն	2	28	700000	1,5 տարի (երեկոյան)	Միջազգային տնտեսական հարաբերություններ
041301.00.7, Կառավարում		**17**	**213**			
041301.00.7, Կառավարում	041301.04.7, Գործարար վարչարարություն (կառավարում)	7	63	700000	1,5 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.13.7, Նախագծերի կառավարում	0	15	620000	2 տարի (ցերեկային)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.17.7, Հանրային կառավարում	4	26	700000	1,5 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.27.7, Մարդկային ռեսուրսների կառավարում	4	16	700000	1,5 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.28.7, Բուժհաստատությունների կառավարում	0	25	1100000	1 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.31.7, Առողջապահության կառավարում և վարչարարություն	0	25	1100000	1 տարի (երեկոյան)	Մենեջմենթ
041301.00.7, Կառավարում	041301.32.7, Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	2	28	700000	1,5 տարի (երեկոյան)	Կառավարման տեղեկատվական համակարգեր

041301.00.7, Կառավարում	041301.15.7, Կառավարման տեղեկատվական համակարգեր	0	15	700000	2 տարի (ցերեկային)	Կառավարման տեղեկատվական համակարգեր
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)		**10**	**70**			
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)	041401.04.7, Մարքեթինգային հաղորդակցություններ	8	42	620000	2 տարի (ցերեկային)	Մարքեթինգ
041401.00.7, Շուկայագիտություն (մարքեթինգ)	041401.07.7, Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	2	28	700000	1,5 տարի (երեկոյան)	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում
056201.00.7 Վիճակագրություն		**4**	**21**			
056201.00.7 Վիճակագրություն	056201.04.7, Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	4	21	700000	1,5 տարի (երեկոյան)	Վիճակագրություն
ԸՆԴԱՄԵՆԸ		**85**	**565**			

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

Դասիչը, մասնագիտությունը	Դասիչը, կրթական ծրագիրը	Անվճար տեղերի քանակը	Վճարովի տեղերի քանակը	Ուսման վարձի չափը (դրամ)	Ուսման տևողությունը	Շեմային քննությունը
1	2	3	4	5	6	7
041201.00.7, Ֆինանսներ		**6**	**14**			
041201.00.7, Ֆինանսներ	041201.06.7, Բանկային գործունեության կազմակերպում	4	6	550000	1,5 տարի	Բանկային գործ
041201.00.7, Ֆինանսներ	041201.08.7, Մաքսային վարչարարություն	2	8	550000	1,5 տարի	Միջազգային տնտեսական հարաբերություններ
041301.00.7, Կառավարում		**1**	**19**			
041301.00.7, Կառավարում	041301.04.7, Գործարար վարչարարություն (կառավարում)	1	19	550000	1,5 տարի	Մենեջմենթ
ԸՆԴԱՄԵՆԸ		**7**	**33**			